ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1914 Թ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՇՈՒՐՋ

ՊՈՂՈՍՅԱՆ Ս. Ա.

1912-1914 թթ. միջազգային դիվանագիտության ուշադրությունը սևեռվեց Հայկական հարցի վրա: Ի վերջո, թուրքերը ստիպված էին 1914 թ. փետրվարի 8-ին Ռուսաստանի հետ ստորագրել համաձայնագիր, որով պարտավորվում էին բարելավել արևմտահայերի վիճակը:

Հայ պատմագրության մեջ Հայկական բարենորոգումների վերաբերյալ այդ համաձայնագրի ստորագրման վրա ազդած որոշ հանգամանքներ անուշադրության են մատնված: Մասնավորապես, հաշվի չի առնված կամ թերագնահատված է այն հանգամանքը, որ բարենորոգումների վերաբերյալ համաձայնագիրը Թուրքիան կնքեց հիմնականում տնտեսական ճնշման հետևանքով, որի գործադրման մեջ մեծ էր Հայ ազգային պատվիրակության նախագահ, եգիպտահայ նշանավոր բարերար Պողոս Նուբար փաշայի (1851-1930) դերը:

1908 թ. օսմանյան սահմանադրությունից հետո արևմտահայերը հույս ունեին, որ իրենց վիճակը կբարելավվի, սակայն երիտթուրքերը շարունակեցին Աբդուլ Համիդի հայահալած քաղաքականությունը: 1912 թ. աշնանը սկսված Բալկանյան պատերազմում թուրքերը պարտություն կրեցին, և Արևելյան խնդիրը կրկին միջազգային դիվանագիտության սեղանին դրվեց:

Հայ քաղաքական շրջանները որոշեցին օգտվել բարենպաստ առիթից և մեծ տերություններին հիշեցնել Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների մասին: Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ը կոնդակով դիմեց ցարական կառավարությանը, որպեսզի Ռուսաստանը հանդես գար արևմտահայերի պաշտպանությամբ: Կաթողիկոսը նաև Պ. Նուբարին լիազորեց եվրոպական տերությունների մոտ բարձրացնելու հայկական բարենորոգումների խնդիրը: Հայկական հարցը նախատեսվում էր արծարծել Լոնդոնի խորհրդաժողովում (1912 թ. դեկտեմբերի 3 – 1913 թ. մայիսի 30), ուր քննարկվում էր Բալկանյան երկրների և Թուրքիայի միջև հաշտության հարցը, ապա՝ Փարիզի ֆինանսական համաժողովում: Սակայն տերությունները ո(չ Լոնդոնում, ո(չ էլ Փարիզում Հայկական հարցը չքննարկեցին:

Այս անգամ հայկական պահանջների պաշտպանությամբ հանդես եկավ Ռուսաստանը: Նա փոխել էր իր նախկին բացասական վերաբերմունքը Հայկական հարցի հանդեպ, և դեռևս 1912 թ. գարնանը թուրքական կառավարությունից պահանջել էր դադարեցնել հայերի դեմ բռնությունները, մասնակի ջարդերն ու թալանը[1]: Նման դիրքորոշումը Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովը

[1] **Աճառեան Հ.,** Տաճկահայոց հարցի պատմութիւնը, Նոր-Նախիջևան, 1915, էջ 73:

բացատրում է հետևյալ կերպ. «Միայն մարդասիրական զգացմունքը չէր, որ կայսերական կառավարությանը բերեց այն գիտակցությանը, թե անհրաժեշտ է ... բանակցություններ սկսել հայկական վիլայեթներում բարենորոգումներ իրականացնելու համար»[2]: Նա նշում է, որ եթե Արևմտյան Հայաստանում ապստամբություն բռնկվեր, ապա դա «անխուսափելիորեն առաջ կբերեր պատերազմ Ռուսաստանի և Թուրքիայի միջև, այսինքն՝ այնպիսի ծանր հետևանքներ, որոնցից ռուսական կառավարությունն ամեն կերպ աշխատում էր խուսափել»[3]: Ռուսական կառավարությունը նաև ցանկանում էր սպասվող համաշխարհային պատերազմում շահել հայերի համակրանքն ու աջակցությունը, ինչպես նաև հայկական նահանգների գրավման նախապայմաններ ստեղծել:

Ռուսաստանի նախաձեռնությամբ 1913 թ. հուլիսի 3-24-ը Ենիքյոյում՝ Կ. Պոլսի ավստրիական դեսպանատանը, վեց տերությունների ներկայացուցիչները քննարկեցին հայկական բարենորոգումների խնդիրը, սակայն ռուս-գերմանական հակասությունների պատճառով որևէ արդյունքի չհասան: Ռուսաստանի ներկայացրած ծրագիրը կազմել էր Կ. Պոլսում ռուսական դեսպանատան աշխատակից Ա. Մանդելշտամը[4]: Ի հակադրություն դրա՝ թուրքական կառավարությունը հուլիսի 1-ին ներկայացրեց իր ծրագիրը[5], որի պաշտպանությամբ հանդես եկավ Գերմանիան: Վերջինիս աջակցում էին Ավստրո-Հունգարիան և Իտալիան, Ռուսաստանին՝ Անգլիան և Ֆրանսիան: Ենիքյոյում հարցի տապալումից հետո երկկողմ բանակցություններ սկսվեցին Ռուսաստանի և Գերմանիայի միջև:

Պ. Նուբարը օգոստոսի 5-ին հրապարակեց «Որոշ դիտարկումներ հայկական բարենորոգումների նախագծի վերաբերյալ»[6] շրջաբերականը: Դրանում նշվում էր, որ Կ. Պոլսում դեսպանների քննարկմանը դրված հայկական բարենորոգումների նախագիծը հանիրավի է քննադատվում: Հայերն անջատման չեն ձգտում, իսկ թուրքերի հակառաջարկն ընդամենը հարցից խուսափելու ձև է, և հույս էր հայտնում, որ, ի վերջո, կկազմվի բարենորոգումների ընդունելի ծրագիր:

Հայկական հարցը դեռևս 1913 թ. ապրիլին քննարկվել էր գերմանական ռայխստագում: Սոցինտերնի նշանավոր գործիչներից Է. Բեռնշտայնը բարձրացրեց հարցը, նշելով, որ Գերմանիան պետք է պաշտպանի առաջինը քրիստոնեություն ընդունած ժողովրդին: Մյուս պատգամավորները ևս արտահայտվեցին հայկական բարենորոգումների օգտին, նշելով, որ հակառակ դեպքում Ռուսաստանը կգրավի այդ տարածքները[7]: Իսկ Բեռլինի ռուսական դեսպան Սվերբեևը Ս. Սազոնովին ուղարկած նամակում հայտնում էր. «Գերմանական մամուլի մեծամասնությունը շարունակում է զբաղուել հայկական հարցով, մեղադրելով Ռուսաստանին եսական ձգտումների մէջ, որոնք ուղղուած են դէպի բոլոր տաճկական սահմանա-

---

[2] **Сазонов С. Д.,** *Воспоминания, М., 1991, с. 169.*

[3] Նույն տեղում:

[4] **Լէօ,** Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 314-329:

[5] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի ֆոնդ, թղթապանակ 5, վավերագիր 11[80], էջ 7:

[6] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Վ. Մալեզյանի ֆոնդ, գ. 742:

[7] Մշակ, 28.IV.1913:

կից վիլայեթների գրաւումը, նոյն իսկ ամբողջ Փոքր-Ասիայի նուաճումը: Մամուլը խորհուրդ է տալիս Եւրոպային ոչ թէ միայն լուրջ կերպով զբաղուել բարենորոգումների հարցով, այլ և նպաստել նրանց իրագործմանը»[8]: Այդ առթիվ Հ. Աճառյանը գրում է. «Շատ յիմար էր Գերմանիայի դրութիւնը. նա մի կողմից թուրքերի կողմը պիտի բռնէր, որպէս զի չխախտէր իր Թուրքիոյ դաշնակցի դիրքը. երկրորդ կողմից պէտք չէր, որ հակառակէր հայերին, որովհետև Գերմանիան էլ վերջապէս տեսնում էր, որ Փոքր-Ասիոյ և մանաւանդ իր աչքադրած Կիլիկիոյ մէջ արհեստները, առևտուրը և երկրագործութիւնը գլխաւորապէս հայոց ձեռքն են. թշնամի դարձնել այս տարրը՝ նշանակում է վնասել իր ապագայ շահերին. սիրաշահել նրանց՝ նշանակում է նպաստել իր իսկ շահերին: Երրորդ կողմից՝ պէտք էր արգելք լինել ռուսների զօրացման և չթողնել, որ հայերը ծառայեն ռուսական շահերին»[9]: Գերմանական կողմը դեմ էր հայկական բարենորոգումների ռուսական ծրագրին և ցանկանում էր այն տապալելով ավելի մեղմ ծրագիր ներկայացնել Թուրքիային: Դրանով նա ցանկանում էր հայերին ցույց տալ, որ առանց իրեն բարենորոգումներ չեն կարող իրականացվել, իսկ Թուրքիային հասկացնել, որ եթե իր պաշտպանությունը չլիներ, ապա Ռուսաստանը նրան կպարտադրեր վատթար պայմաններ:

Հայկական բարենորոգումների վերաբերյալ տերությունների բանակցությունները, ի վերջո, հանգեցրին 1913 թ. սեպտեմբերի 10-ի ռուս-գերմանական վեց կետից բաղկացած հետևյալ համաձայնագրի ստորագրմանը. ա) Բ. Դուռը արևելյան Անատոլիայի երկու սեկտորների (Էրզրում, Սվազ, Տրապիզոն և Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր) համար տերություններից խնդրում էր առաջարկել երկու վերատեսուչներ, բ) այդ վերատեսուչները նշանակում և արձակում էին սեկտորների բոլոր պաշտոնյաներին, գ) սեկտորների խորհուրդները կազմվելու էին մահմեդականներից ու քրիստոնյաներից՝ հավասարության հիմունքներով, դ) հավասարությունը կիրառվելու էր նաև բոլոր պաշտոնների բաշխման ժամանակ, ե) Բ. Դուռը տերություններին առաջարկելու էր բարենորոգումների իրագործումը հսկել Կ. Պոլսի դեսպանների և տեղական հյուպատոսների միջոցով, զ) Բ. Դուռը կպայմանավորվի տերությունների հետ նաև այլ բարենորոգումներ իրագործելու այդ սեկտորներում[10]: Կ. Պոլսում ռուսական դեսպան Ն. Գիրսը և գերմանական դեսպան Հ. Վանգենհայմն այս համաձայնագիրը ներկայացրեցին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային: Սակայն թուրքական կառավարությունը սկսեց ներկայացնել նոր հակառաջարկներ, որպեսզի խուսափի այդ ծրագրի ընդունումից: Այսպիսով, Թուրքիան որդեգրել էր ձգձգումների ու խուսանավումների քաղաքականությունը,

---

[8] Ժողովածու դիպլոմատիքական դոկումենտների: Բարենորոգումները Հայաստանում (1912 թ. Նոյեմբեր 12-ից մինչեւ 10 մայիսի 1914 թ.), թարգմ. **Ս. Աւագեանի,** Թիֆլիս, 1915, էջ 33-34:

[9] **Աճառեան Հ.,** նշվ. աշխ., էջ 74:

[10] Ժողովածու դիպլոմատիքական դոկումենտների…., էջ 60-61:

որի շնորհիվ նախկինում կարողացել էր տապալել Հայկական հարցի լուծմանն ուղղված բոլոր ջանքերը:

Այդ պայմաններում էր, որ Պ. Նուբարը առաջ քաշեց Օսմանյան կայսրության վրա տնտեսական ճնշում գործադրելու գաղափարը, որպեսզի թուրքերն ավելի զիջող դառնան: Դեռևս 1913 թ. հունիսին «Ֆրանսիական Ասիայի ընկերության» կազմակերպած խորհրդաժողովը Պ. Նուբարի առաջարկությամբ դիմեց Ֆրանսիայի կառավարությանը, որպեսզի այն մերժի Թուրքիային որևէ ֆինանսական աջակցության տրամադրումը՝ մինչև հայկական նահանգներում բարենորոգումներ չիրականացվեին:

Թուրքիան հսկայական արտաքին պարտքեր ուներ և լիակատար ֆինանսական կախվածության մեջ էր տերություններից, որոնց ստիպված տարբեր առանձնաշնորհումներ էր տալիս (երկաթուղիների կառուցման իրավունք, մաքսատներից, աղից, ծխախոտից գանձվող հարկեր և այլն): Նրա ֆինանսական ծանր վիճակը վատթարացել էր 1911 թ. թուրք-իտալական և 1912-1913 թթ. Բալկանյան երկու պատերազմներից հետո: Թուրքիան խոշոր փոխառության կարիք ուներ, ուստի դիմեց Ֆրանսիային: Նա դիմեց նաև խոշոր տերություններին՝ մաքսային տուրքերը 4%-ով ավելացնելու արտոնություն ստանալու խնդրանքով: Այդ հարցերը կարգավորելու նպատակով Եվրոպա մեկնեց թուրքական պատվիրակությունը՝ ֆինանսների նախարար Ջավիդ բեյի գլխավորությամբ: Տերությունները կարող էին ֆինանսական աջակցությունը պայմանավորել հայկական բարենորոգումներով, որից Թուրքիան չէր կարող հրաժարվել:

Պ. Նուբարն իր ամբողջ եռանդը ներդրեց, որպեսզի եվրոպական կառավարություններին համոզի Թուրքիայի վրա տնտեսական ճնշում գործադրել, քանի որ առանց դրա վերջինս չէր ընդունի հայկական բարենորոգումների ծրագիրը: Բանն այն է, որ Գերմանիան մտադիր չէր որևէ քայլ ձեռնարկել, որպեսզի Թուրքիային պարտադրի գործադրել բարենորոգումների ռուս-գերմանական ծրագիրը: Չնայած հայկական նահանգներում բարենորոգումներ չգործադրվելու դեպքում Ռուսաստանը սպառնում էր ռազմական միջամտությամբ, Թուրքիան չէր վախենում, քանզի գիտեր, մյուս տերությունները դրան դեմ կլինեն: Ռուսաստանը 1913 թ. հուլիսին Թուրքիայից պահանջեց Ադրիանուպոլիսը վերադարձնել Բուլղարիային և սպառնաց, որ զորք կմտցնի Արևմտյան Հայաստան: Սակայն Անգլիան և Ֆրանսիան անընդունելի համարեցին ռազմական միջամտությունը, իսկ Գերմանիան հայտարարեց, որ ռուսների Արևմտյան Հայաստան մտնելը պատերազմի առիթ կդառնա[11]: Ինչպես տեսնում ենք, ռազմական միջամտությամբ հարցի լուծումն անիրական էր, և հայ գործիչները դա լավ էին գիտակցում:

Այդ պայմաններում Թուրքիայի վրա կարող էր ներգործել միայն տնտեսական ճնշումը: Հենց այդ նպատակով Պ. Նուբարը դիմումներ հղեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությանը, ապահովեց բազմաթիվ ֆրանսիացի սենատորների,

---

[11] **Коджоян Р. А.,** *К вопросу о русско-германском “сотрудничестве” по проблеме реформ в Западной Армении (июль-декабрь 1913 г.), (ՀՀ ԳԱԱ Հրաբեր հասարակական գիտությունների,* 1989, N 7, էջ 75):

խորհրդարանականների և հրապարակագիրների աջակցությունն այդ հարցում: Նա առաջին հերթին փորձում էր ձեռք բերել Ֆրանսիայի աջակցությունը, քանի որ օսմանյան պարտքի 60-65%-ը պատկանում էր նրան, ինչպես նաև այդ պահին վերջինիս և Թուրքիայի միջև բանակցություններ էին ընթանում նոր փոխառության շուրջ, որի դիմաց Ֆրանսիան Արևմտյան Հայաստանում և Սիրիայում երկաթուղի կառուցելու կոնցեսիա էր ստանալու: Պ. Նուբարը մատնանշում էր, որ ավելի շահավետ կլինի փոխառությունը տրամադրել բարենորոգումների ծրագիրն ընդունելուց հետո, որպեսզի այն ավելի արդյունավետ օգտագործվի:

Հոկտեմբերի 17-ին Պ. Նուբարը Փարիզում հանդիպեց Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովի հետ: Նրանք քննարկեցին բարենորոգումների ծրագիրը Թուրքիային ընդունել տալու խնդիրը: Պ. Նուբարն առաջարկեց Ռուսաստանին՝ մերժել Թուրքիային 4%-անոց մաքսային հավելումների հարցում, ինչպես նաև միջնորդի ֆրանսիական կառավարությանը, որպեսզի վերջինս մերժի վարկերի տրամադրումը, մինչև որ Թուրքիան չհամաձայնի ընդունել բարենորոգումների ծրագիրը: Ս. Սազոնովը պատասխանեց, որ մաքսային հավելումների հարցում Ռուսաստանը չի կարող ճնշում գործադրել, քանի որ արդեն Թուրքիայից պահանջել և ստացել է իր տվածից ավելին, իսկ Ֆրանսիայի կողմից ֆինանսական ճնշումն ավելի գործնական համարեց և խոստացավ այդ մասին զրուցել Ֆրանսիայի արտգործնախարար Ս. Պիշոնի հետ[12]:

Հոկտեմբերին Ռուսաստանը փորձեց նաև Գերմանիային համոզել, որպեսզի թուրքական պատվիրակության հետ բանակցությունների ժամանակ մաքսային հավելումները պայմանավորի հայկական բարենորոգումների ծրագրի ընդունումով, սակայն մերժում ստացավ:

Պ. Նուբարը հոկտեմբերին 18-ին հանդիպեց Ս.Պիշոնի հետ, որը խոստացավ աջակցել հայկական բարենորոգումների հարցում, քանի որ դրանք, իր կարծիքով, Թուրքիայի ամբողջականության և Եվրոպայում խաղաղության պահպանման երաշխիքներ էին: Սակայն նա նշեց, որ Ֆրանսիան միայնակ չէր կարող Թուրքիայի վրա տնտեսական ճնշում գործադրել և հաջողության համար անհրաժեշտ է նաև մյուս տերությունների աջակցությունը[13]: Նոյեմբերին Պ. Նուբարը Փարիզում հանդիպեց նաև Ռուսաստանի վարչապետ Վ. Կոկովցևի հետ ու ընդգծելով, որ բարենորոգումների ուշացումը հղի է վտանգներով, կրկին առաջարկեց ֆինանսական ճնշման միջոցով հասնել դրանց կենսագործմանը: Նա Վ. Կոկովցևին տեղեկացրեց, որ անգլիական պառլամենտի անդամներից բաղկացած մի հանձնախումբ պատրաստվում է այդ նպատակով դիմել Անգլիայի արտգործնախարար Է.Գրեյին: Պ. Նուբարը խնդրեց, որպեսզի Ռուսաստանը համաձայնության գա մյուս տերությունների հետ և Թուրքիայի վրա միասնական ֆինանսական ճնշում գործադրեն: Վ. Կոկովցևը խոստացավ, որ Պետերբուրգ վերադառնալուց հետո Ս. Սազոնովին կհանձնարարի՝ մյուս տերությունների հետ համաձայնության հասնել[14]:

---

[12] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 3-5:

[13] Նույն տեղում:

[14] Նույն տեղում, թ. 13-14:

Դրանից հետո Պ. Նուբարը Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելու առաջարկությամբ կրկին դիմեց Ս. Պիշոնին: Վերջինս պատասխանեց, որ եթե Ֆրանսիան հրաժարվի փոխառություն տրամադրելուց, ապա Թուրքիան կդիմի Գերմանիային և նրանից բարձր տոկոսներով կարճաժամկետ փոքր զումարներ կվերցնի մինչև Ֆրանսիայից փոխառություն ստանալը: Ս. Պիշոնը հասկացրեց, որ եթե բոլոր տերությունները այդ հարցում համաձայնության գան, ապա Ֆրանսիան չի հրաժարվի ճնշում գործադրելուց, որովհետև շահագրգռված էր բարենորոգումների գործադրմամբ: Հակառակ դեպքում դա կարող էր հանգեցնել Թուրքիայի մասնատմանը, որից Ֆրանսիան խուսափում էր՝ ելնելով Օսմանյան կայսրությունում իր ֆինանսական գերիշխող դիրքերից:

Պ. Նուբարը անմիջապես մեկնեց Բեռլին և Գերմանիայի կառավարությունից հավաստիացում ստացավ՝ Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելուն աջակցելու հարցում: Գերմանիան ցանկանում էր, որ Թուրքիան հայկական բարենորոգումների հարցում զիջեր՝ հույս ունենալով դրանով մեղմել Ռուսաստանի և Անտանտի մյուս երկրների հակազդեցությունը՝ Լիման ֆոն Սանդերսին թուրքական առաջին բանակային կորպուսի հրամանատար նշանակելու կապակցությամբ: Առաջին բանակը վերահսկում էր Կ. Պոլիսը, և գերմանական կողմը դրանով փաստորեն իր հսկողության տակ էր վերցնում նեղուցները, որի շնորհիվ պատերազմի դեպքում այդ ռազմավարական կարևոր կետում կստանար գերիշխող դիրք և ցանկացած պահի կարող էր հարվածել ռուսական նավահանգիստներին: Դա լրջորեն անհանգստացրեց Ռուսաստանին, որը Անտանտի մյուս պետությունների հետ սկսեց ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Բեռլինում Պ. Նուբարը հանդիպեց նաև ռուսական դեսպան Սվերբեևի հետ և խնդրեց, որ ռուսական կառավարությունը ևս Գերմանիայի հետ համաձայնության գա Թուրքիայի վրա միասնական ֆինանսական ճնշում գործադրելու հարցում:

Փարիզ վերադառնալուց անմիջապես հետո Պ. Նուբարի նախաձեռնությամբ «Ֆրանսիական Ասիայի ընկերությունը» նոյեմբերի 30-ին կազմակերպեց միջազգային կոնֆերանս՝ քննելու այն միջոցները, որոնց գործադրմամբ թուրքական կառավարությունը ստիպված կլիներ ընդունել հայկական բարենորոգումների ծրագիրը: Կոնֆերանսին մասնակցեցին բազմաթիվ ականավոր գործիչներ. Ֆրանսիայից՝ «Ֆրանսիական Ասիայի ընկերության» հայկական բաժնի ղեկավար գնդապետ դը Լակրուան (նախագահող), Լ. դը Քոնթանսոնը, Ռ. Բինոն, Ռ. դը Քեն և ուրիշներ, Գերմանիայից՝ դոկտոր Յ. Լեփսիուսը և դոկտոր Պ. Ռոհրբախը, Ավստրո-Հունգարիայից՝ դոկտոր Ա. Հերմանը և Յ. Փրանկուլը, Անգլիայից՝ Ա. Վիլյամսը, Հ. Բաքստոնը, պառլամենտականներ Թ. Փ. Օ'Քոնորը և Ա. Ֆ. Ուայթը, Իտալիայից՝ դուքս դը Անդրիան (սենատոր), Ռուսաստանից՝ կաղետական կուսակցության առաջնորդ, դումայի անդամ Պ. Միլյուկովը և Կ. Պավլովսկին, Շվեյցարիայից՝ Լ. Ֆավրը և Ռ. Քաբարետը[15]: Կոնֆերանսը քննարկեց Թուրքիային բարենորոգումներն ընդունել տալու հարցը և եզրակացրեց, որ պետք է նրա վրա տնտեսական ճնշում գործադրել: Բանն այն է որ, եթե Թուրքիան դուրս գար

[15] Նույն տեղում, թ. 40:

ֆինանսական ճգնաժամից, ապա դժվար կլիներ նրան ընդունել տալ բարենորոգումների ծրագիրը, իսկ դա կարող էր Արևմտյան Հայաստանում հարուցել խռովություն, որը կհանգեցներ ռազմական միջամտության և կայսրության անդամահատմանը[16]: Իր ելույթում Պ. Նուբարն անդրադառնալով Հայկական հարցի պատմությանը՝ նշեց, որ բոլոր պետությունները գիտակցել են բարենորոգումների անհրաժեշտությունը, քանի որ Եվրոպան նաև սեփական շահերն ունի՝ պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և հայկական նահանգների բարգավաճման շնորհիվ ապահովել իր տնտեսական շահերը: Ազգային պատվիրակության նախագահը ցույց տվեց, որ միայն ֆինանսական ճնշումը կարող է ազդել Թուրքիայի վրա: Նա նշեց, որ միայն փոխառությամբ կայսրության տնտեսական վիճակն անհնար է բարելավել, անհրաժեշտ են բարենորոգումներ, որոնց շնորհիվ զարկ կտրվի երկրի ներքին հարստությունների զարգացմանը[17]: Պ. Միլյուկովը հիշեցրեց Անգլիայի վարչապետ Վ. Գլադսթոնի 1895 թ. արտասանած խոսքերը հայկական բարենորոգումների մասին. 1) սահմանափակվել խիստ անհրաժեշտությամբ, 2) չհավատալ Բ. Դռան խոստումներին և պահանջել երաշխավորություններ, 3) չքաշվել ճնշում գործադրելուց, քանի որ Կ. Պոլսում արտաքին պահանջներն ավելի լավ են հասկանում, քան ներքին պարտքը: Պ. Միլյուկովն այդ միջոցներից ամենահիրականը համարեց Թուրքիայի խնդրած վարկերի հետաձգումը, ինչպես նաև որևէ ֆինանսական զիջում անելը, մինչև չընդունվի բարենորոգումների ծրագիրը[18]: Որոշվեց, որ կոնֆերանսի մասնակիցները իրենց կառավարություններին ստիպեն, որպեսզի նրանք «չ՝կորցնեն պատեհ առիթը գործադրելու մի ֆինանսական ճնշում, որը, ըստ ամենայնի, լինի ազդու և թույլ տայ վերջ դնել մի դրութեան, որ չի կարող այլևս շարունակուել անվտանգ»[19]:

Կոնֆերանսը մեծ արձագանք ունեցավ ֆրանսիական մամուլում, իսկ նրա ընդունած բանաձևերն արտատպեցին փարիզյան բոլոր հեղինակավոր թերթերը: Բացի այդ, Փարիզի մի քանի հայտնի պարբերականներ տպեցին հանրահայտ հոդվածներ՝ շնորհիվ նրանց խմբագիրների հետ Պ. Նուբարի ունեցած սերտ կապերի[20]: «*Le Temps*» թերթում հրապարակվեց նաև Պ. Նուբարի հարցազրույցը, ուր նա նշում էր հայերի շահագրգռվածությունը Թուրքիային Եվրոպայի ֆինանսական աջակցության հարցում, սակայն ճիշտ էր համարում դա անել բարենորոգումներից հետո, որպեսզի այն ավելի արդյունավետ օգտագործվի[21]: Այդ հարցազրույցն անհանգստացրեց թուրքական կառավարությանը, և թուրքերը պատասխան ուղարկեցին: Թերթի տնօրենն այն տրամադրեց Պ. Նուբարին, և դեկտեմբերի 12-ին թե(թուրքական հոդվածը, թե(Պ. Նուբարի պատասխանը միաժամանակ հրապարակվեցին: Դրանով հասարակությունը կրկին հնարավորություն ունեցավ

---

[16] Արարատ, Ս. Էջմիածին, 1914, հունվար, էջ 39:

[17] **Բարգեն վարդապետ**, Հայկական հարցը եւ Պօղոս Նուբար փաշան, Վաղարշապատ, 1914, էջ 29-31:

[18] Արարատ, 1914, հունվար, էջ 32-34:

[19] **Բարգեն վարդապետ**, նշվ. աշխ., էջ 31:

[20] ՀՀԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 24:

[21] Յուսաբեր, Կահիրե, 16.XII.1913:

ծանոթանալու հայկական բարենորոգումների շուրջ ընթացող բանակցությունների ընթացքին և հայկական ու թուրքական տեսակետներին[22]:

Պ. Նուբարը նոյեմբերի 22-ին հրապարակած «Հայկական բարենորոգումներ, Բ. Դռան նախագիծը և եվրոպական խորհրդականներ»[23] վերնագրով շրջաբերականում քննադատեց թուրքերի առաջարկը, ըստ որի հայկական նահանգներում, ինչպես ժամանակին իրագործվել էր Եգիպտոսում, վալիներին կից նշանակվելու էին եվրոպացի խորհրդականներ, որոնք պետք է բարեփոխումներ իրականացնեին: Նա ցույց տվեց, որ այդպես ոչ մի բարեփոխում չէր իրականացվի: Նման փորձը Եգիպտոսում հաջողություն էր ունեցել, քանի որ խորհրդականները միայն անգլիացիներ էին, որոնց թիկունքին կանգնած էր Մեծ Բրիտանիան: Այժմ խորհրդականները նշանակվելու էին տարբեր պետությունների կողմից, իսկ վերահսկողությունն իրականացնելու էին վեց տերությունները: Հետևաբար թուրքերը հեշտությամբ կտապալեին բարենորոգման բոլոր փորձերը:

Դեկտեմբերի 16-ին Փարիզում թուրքական դեսպան Ռիֆաթ փաշան Պ. Նուբարին հանձնեց մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի հեռագիրը, որով Հայ ազգային պատվիրակության նախագահը հրավիրվում էր Կ. Պոլիս՝ բարենորոգումների վերաբերյալ բանակցություններ վարելու: Պ. Նուբարը համոզված էր, որ դրանով թուրքական կառավարությունը փորձում է ձգձգել դեսպանների ներկայացրած ծրագրի ընդունումը, ուստի կտրականապես մերժեց հրավերը: Նա հայտնեց, որ իր պարտականությունը միայն Եվրոպայում բանակցելն է, իսկ Կ. Պոլսում այդ իրավասությունը պատկանում է պատրիարքարանին: Պ. Նուբարը նաև ավելացրեց, որ այժմ բանակցություններն ընթանում են տերությունների ներկայացուցիչների ու թուրքական կառավարության միջև, և քաղաքավարությունը պահանջում է, որ հայերը չմիջամտեն[24]:

Ֆրանսիայի կողմից ավելի հայանպաստ դիրք բռնելու հնարավորություն ստեղծվեց, երբ 1913 թ. դեկտեմբերին Ա. Բրիանի կառավարությանը փոխարինեց Գ. Դումերգը: Այդ առթիվ Պ. Նուբարը 1913 թ. դեկտեմբերի 12-ին կաթողիկոսին գրում է. «Մ. Քլէմանսօ, որուն հետ երկայն ժամանակէ ի վեր բարեկամական յարաբերութիւններ ունեմ, և որուն հայասիրական զգացումները խիստ ծանօթ են, նոր Գապինէին վրայ իրական ազդեցութիւն մ՚ունի, որուն կ՚անդամակցի նաև Մ. Գայիօ, որ իմ պաշտօնակիցս է՝ Գրէտի Ֆօնսիէ Էժիբսիէն Պանքային վարչական ժողովին մէջ: Այս պայմաններուն տակ նորակազմ նախարարութեան տրամադրութիւնները անտարակոյս բարեացակամ կրնան ըլլալ մեր նկատմամբ»[25]:

Դեկտեմբերից Ֆրանսիան սկսեց ֆինանսական ճնշում գործադրել Թուրքիայի վրա, որը պայմանավորված էր Լ. ֆոն Սանդերսին տրված պաշտոնով: «Յուսալի է,- այդ օրերին գրում էր Պ. Նուբարը կաթողիկոսին,- որ երբ սոյն պետութիւնք այս

---

[22] ՀՀԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 59:

[23] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Վ. Մալեզյանի ֆոնդ, գ. 742) **Uras E.,** *The Armenians in History and the Armenian Question, Istanbul, 1988, p. 662-664.*

[24] ՀՀԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 61:

[25] Նույն տեղում, թ. 59:

կետին վրայ գոհացում ստանան, անշուշտ բարենորոգմանց խնդրոյն լուծումն ալ անոր պիտի միացնեն»[26]: Հատկանշական է, որ դեկտեմբերին Կ. Պոլսում գերմանական դեսպան Հ. Վանգենհայմը թուրքական կառավարությունից պահանջեց արագորեն լուծել Հայկական հարցը, նշելով, որ եթե դա կատարվի, ապա Լ. ֆոն Սանդերսի պաշտոնավարությունը նման դժգոհություն չի առաջացնի[27]: Ճիշտ է՝ ֆինանսական ճնշումը գլխավորապես կապված էր այդ հանգամանքի հետ, սակայն, ինչպես տեսնում ենք, այն նպաստեց նաև Հայկական հարցին, քանի որ նույնիսկ Գերմանիան իր դաշնակցից պահանջեց ընդունելու բարենորոգումների ծրագիրը:

1914 թ. հունվարին Պ. Նուբարը դիմեց Գ. Դումերգին՝ թուրքական կառավարությանը հասկացնելու, որ փոխառություն կստանա միայն բարենորոգումների ծրագիրն ընդունելուց հետո: Գ. Դումերգը խոստացավ Թուրքիայի ֆինանսների նախարար Ջավիդ բեյի հետ բանակցությունների ժամանակ այդ հարցը բարձրացնել և կատարեց իր խոստումը[28]: Գ. Դումերգը դիմեց նաև Անգլիային ու Ռուսաստանին, որպեսզի Եռյակ համաձայնության երկրները միասնաբար հանդես գան և Թուրքիային մաքսային հավելումներ կատարելու իրավունք տալն ու ֆինանսական աջակցությունը կապեն Լ. ֆոն Սանդերսի պաշտոնավարության և հայկական բարենորոգումների խնդրի լուծման հետ[29]: Այդ տնտեսական ճնշման և Ռուսաստանի հզոր ներգործության հետևանքով Թուրքիան ստիպված էր ավելի զիջող դառնալ:

Հունվարի 25-ին Պ. Նուբարը Փարիզում հանդիպեց Կ. Պոլսի ռուսական դեսպան Ն. Գիրսի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեց հայկական բարենորոգումների հարցը: Դեսպանը նշեց, որ Թուրքիան բավական մեծ զիջումների է կատարել երկու պատճառով՝ քաղաքական, որոնք ազդեցին բանակցությունների վրա, և տնտեսական, քանի որ ֆրանսիական կառավարությունը մերժեց ֆինանսական աջակցություն տալ՝ մինչև բարենորոգումների խնդրի լուծումը: Սակայն նա նշեց, որ ֆինանսական ճնշումը երկար չէր կարող շարունակվել, քանի որ դա Թուրքիային կըկանգնեցներ սնանկության առջև, որից տերությունները խուսափում էին[30]: Նրանք եզրակացրին, որ պետք է համաձայնվեն թուրքերի առաջարկած զիջումների հետ, քանի որ տնտեսական ճնշումը երկար շարունակվել չէր կարող, իսկ իր ֆինանսական վիճակը բարելավելուց հետո Թուրքիան կհրաժարվեր ամեն տեսակ զիջումներից, իմանալով, որ Ռուսաստանի ռազմական միջամտությանը դեմ կլինեն բոլոր տերությունները:

---

[26] Նույն տեղում, թ. 67:

[27] *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива Министерства иностранных дел Кайзеровской Германии. Сб. док., ред.* **В. Микаелян**, *Е., 1995, с. 146-147.*

[28] ՀՀԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 58, թ. 1:

[29] Ժողովածու դիպլոմատիքական դոկումենտների, էջ 93:

[30] ՀՀԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 58, թ. 2:

Չնայած թուրքական զիջումները չէին ապահովում լայն բարենորոգումներ, որոնց ձգտում էին հայերը, «սակայն և այնպէս այն կը պարունակէ խիստ կարևոր զիջումներ, որ Բ. Դուռը ըրած է շնորհիւ ուրախալի պարագաներու»,- հունվարի 13-ին գրում էր Պ. Նուբարը կաթողիկոսին և հույս էր հայտնում, որ «Եթէ խղճի մտօք գործադրուի, ճշմարտիւ իրական յառաջդիմութիւն մը կը ներկայացնէ»[31]: 1914 թ. փետրվարի 8-ին Կ. Պոլսում ռուսական հավատարմատար Կ. Գուլկևիչը և վարչապետ Սայիդ Հալիմ փաշան հայկական բարենորոգումների վերաբերյալ կնքեցին ռուս-թուրքական համաձայնագիր, որի ստորագրմանը նպաստեց Թուրքիայի վրա գործադրված ֆինանսական ճնշումը:

Այսպիսով, ինչպես տեսանք, հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրման հիմնական գործոնն էր տնտեսական ճնշումը, որի գործադրման գաղափարն առաջ քաշեց Հայ ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը: Նա կարողացավ մեծ տերությունների ղեկավարներին ցույց տալ իրենց պետությունների շահը հայկական բարենորոգումների հարցում և այն Թուրքիային գործադրել տալու միակ իրական լծակը՝ ֆինանսական ճնշումը: Ի վերջո, տերությունները, համոզվելով Պ. Նուբարի փաստարկների արդարացիության մեջ, հիմնականում տնտեսական ճնշման միջոցով կարողացան թուրքերից կորզել բարենորոգումներ խոստացող իրավական համաձայնագիր: Սակայն հայկական բարենորոգումների ծրագրին վիճակված չէր իրականանալ, քանի որ երիտթուրքական կառավարությունը, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից, հրաժարվեց դրանից և ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի բնաջնջման իր վաղեմի ծրագրի գործադրմանը:

О ПОДПИСАНИИ РУССКО-ТУРЕЦКОГО СОГЛАШЕНИЯ 1914 Г. ПО АРМЯНСКИМ РЕФОРМАМ

ПОГОСЯН С. А.

Резюме

После долгих переговоров между великими державами в сентябре 1913 г. правительству был представлен русско-германский проект относительно армянских реформ. Однако турецкое правительство выдвинуло контрпредложения во избежание принятия этого проекта. Председатель армянской делегации в Европе Погос Нубар выдвинул идею экономического давления на Турцию. В результате активной деятельности Погос Нубара великие державы поддержали его идею финансового давления, благодаря чему 8 февраля 1914 г. был подписан русско-турецкий договор относительно армянских реформ.

[31] Նույն տեղում: